07.06.2013թ.

Հայաստանի Հանրապետության
Տնտեսական Մրցակցության
ՊաշտպանությանՊետական
Հանձնաժողովին
Հանձնաժողովի Նախագահ
Պարոն Արտակ Շաբոյանին

Հարգելի պարոն Ա.Շաբոյան, հանձնաժողովի անդամներ

Ձեր քննությանն ենք ներկայացնում մասնավոր պահնորդական գործունեության ոլորտին առնչվող մի շարք հարցեր, որոնք վերաբերում են նշված բնագավառում պետական գնումներով կազմակերպվող և այլ մրցույթներին ՀՀ Հայաստանի Հանրապետության ոստիկանության (դրա ստորաբաժանումը՝ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն) կողմից իրականացվող պահնորդական գործունեությանը և մենաշնորհ ձերք բերելու նպատակով տարվող քաղաքականությանը, որը շահույթ չհետապնդելով և ազատված լինելով հարկեր վճարելու պարտականությունից, գերիշխող դիրքի չարաշահումով անբարեխիղճ մրցակցություն է իրականացրել, մասնավորապես.

1. 24.12.2012թ-ին «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/01 ծածկագրով, կայացվել է անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված բաց ընթացակարգի մրցույթ, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը, ՊՊԳՎ թիվ 2 ռազմականացված ջոկատը, <<Քրոուն Սեքյուրիթի>>ՍՊԸ-ն, <<Լեգիոն Ե.Ս.Է>>ՍՊԸ-ն և << ՍԻԼԵՐ>> ՍՊԸ-ն հետևյալ առաջարկված գներով. /արձանագրություն թիվ 2, 24.12.2012թ/

N	Ընկերության անվանումը	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն	52,416,000 (հիսուն երկու միլիոն չորս հարյուր տասնվեց հազար)
2	<<Քրոուն Սեքյուրիթի>>ՍՊԸ	47,000,000 (քառասուն յոթ միլիոն)
3	<<Լեգիոն Ե.Ս.Է>>ՍՊԸ	49,466,666 (քառասուն ինն միլիոն չորս հարյուր վափսունվեց հազար վեց հարյուր վափսուն վեց)
4	ՊՊԳՎ թիվ 2 ռազմականացված ջոկատը	57,600,000 (հիսուն յոթ միլիոն վեց հարյուր)

5	<< ՍԻԼԵՐ>> ՍՊԸ	66,552,000 (վաթսուն վեց միլիոն հինգ հարյուր հիսուն երկու հազար)

Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին չի համապատասխանել <<Քրոուն Սեքյուրիթի>>ՍՊԸ–ի ներկայացված հայտը և առաջարկված գների սահմաններում հաղթող է ճանաչվել <<Լեգիոն Ե.Ս.Է>>ՍՊԸ-ն. /արձանագրություն թիվ 3, 27.12.2012թ/

ՀՀ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 14.01.2013թ. բողոք է ներկայացրել՝ կազմակերպված բաց ընթացակարգը դադարեցնելու պահանջով և բողոքի հիման վրա, 07.05.2013թ-ին կրկին կայացվել է ՀՊՃՀ-ԲԸԾՁԲ-13/02 ծածկագրով մրցույթ, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը, <<Քրոուն Սեքյուրիթի>>ՍՊԸ-ն և <<Լեգիոն Ե.Ս.Է>>ՍՊԸ-ն հետևյալ առաջարկված գներով. /արձանագրություն թիվ 2, 07.05.2013թ/

N	Կերության անվանումը	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն	39,732,000 (երեսուն ինը միլիոն յոթ հարյուր երեսուն երկու հազար)
2	<<Քրոուն Սեքյուրիթի>>ՍՊԸ	40,799,880 (քառասուն միլիոն յոթ հարյուր իննսուն ինը հազար ութ հարյուր ութսուն)
3	<<Լեգիոն Ե.Ս.Է>>ՍՊԸ	43,800,000 (քառասուն երեք միլիոն ութ հարյուր)

Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանել են բոլորի հայտերը և առաջարկված ցածր գնով հաղթող է ճանաչվել ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն. /արձանագրություն թիվ 3, 14.05.2013թ/

2. 05.04.2013թ-ին անց է կացվել «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար՝ ՆՏՎԿ-ՊԸԾՁԲ-13/01 ծածկագրով, անվտանգության և պահակային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված պարզեցված ընթացակարգի մրցույթ, որին մասնակցել են ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը, <<Քրոուն Սեքյուրիթի>>ՍՊԸ-ն և <<Տրանս-Սֆեր>>ՍՊԸ-ն հետևյալ առաջարկված գներով. /արձանագրություն թիվ 2, 07.05.2013թ/

N	Կերության անվանումը	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն	160,000 (հարյուր վաթսուն հազար,առանց շահույթի)
2	<<Քրոուն Սեքյուրիթի>>ՍՊԸ	249,700 (երկու հարյուր քառասուն ինն հազար յոթ հարյուր)
3	<<Տրանս-Սֆեր>>ՍՊԸ	259,200 (երկու հարյուր հիսուն ինն հազար երկու հարյուր)

Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին առաջարկված ցածր գնով հաղթող է ճանաչվել ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն. /արձանագրություն թիվ 3, 14.05.2013թ/

<u>Արդյոք</u> ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությանը մրցույթներին հաղթող ճանաչվելը կամ պայմանագրային պարտավորությունների կատարումը պետության համար են:

Ըստ էության Ոստիկանությունը որպես պետական մարմին քաղաքացիաիրավական հարաբերություններին պետք է մասնակցի պետության անունից և քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ պետք է ձեռքի բերի պետության համար, և նաև Ոստիկանության աշխատակազմը չի կարող հանդիսանալ պահնորդական ծառայությունների մատուցման պայմանագրի կողմ:

Ոստիկանությունը (դրա ստորաբաժանումը) իր պահնորդական գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ստանում է ՀՀ պետական բյուջեից, իսկ մասնավոր պահնորդական կազմակերպությունները գործում են սեփական միջոցների հաշվին, այսինքն ստացվում է, որ

1) մասնավոր պահնորդական կազմակերպությունները՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ, իրենց կողմից մատուցված ծառայությունների համար ստանում են շահույթ և վճարում են հարկերը.
2) ՀՀ ոստիկանությունը (դրա ստորաբաժանումը՝ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը), որպես պետական մարմին, ազատված է հարկեր վճարելու պարտականությունից, ինչից օգտվելով իրականացնում է տնտեսական գործունեություն.
3) ՀՀ ոստիկանությունը մասնակցում է կայացվող մրցույթներին ցածր գին ներկայացնելով ճանաչվում է հաղթող և ստանում հավելյալ շահույթ,այն հարկվում է թե ոչ.
4) ՀՀ ոստիկանությունը մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ իրավունք ունի մասնակցելու նմանատիպ մրցույթների և արդյոք մրցույթներում հաղթող ճանաչվելուց հետո ներկայացրել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջով <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշները /բանկային երաշխիք/ հիմնավորող փաստաթղթերը:

<u>Այսպիսով,</u> Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում վերը նշված փաստերը և նաև այն, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (դրա ստորաբաժանումը՝ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը)՝ նմանատիպ պահնորդական գործունեության իրականացնելով, անվտանգության և պահակային/պահնորդական/ ծառայությունների ձեռքբերման նպատակով գնումների շրջանակներում կազմակերպվող կամ այլ մրցույթներին մասնակցելով ինչպես նաև հաղթող չճանաչվելու դեպքում իր մրցույթները դադարեցնելու պահանջով՝ լիազորությունները օգտագործելով, անհիմն բողոքարկելով և հաջորդիվ ներկայացնելով ավելի ցածր գներ, առաջացրել է մասնավոր պահնորդական գործունեության ոլորտ մուտքի խոչընդոտներ, որը գերիշխող դիրքի չարաշահման և անբարեխիղճ մրցակցության արդյունքով հանգեցրել է բնականոն մրցակցության խաթարում, ինչը նաև մենաշնորհ ձեռք բերելու միտում է:

Կից ներկայացնում ենք վերը նշված մրցույթների վերաբերյալ կազմված արձանագրությունների պատճենները:

Հարգանքով՝

Մասնավոր Պահնորդական Գործունեություն Իրականացնող
և Պահնորդներ /Թիկնապահներ/ Ուսուցանող
Կազմակերպությունների Միության

Խորհրդի նախագահ՝

Հովհաննես Պետրոսյան